Հրապարակման ենթակա է

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի նոյեմբերի 20-ից 22-ը

Ուզբեկստանի Հանրապետություն (Տաշքենդ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Դավիթ Անանյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ուզբեկստանի Հանրապետություն, Տաշքենդ, նոյեմբերի 20-ից 22-ը

4. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 70-րդ նիստին և Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 33-րդ նիստին:

6. Քննարկված թեմաները՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 70-րդ նիստի ընթացքում քննարկվել են «Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների փոխգործակցության մասին» համաձայնագրի 3-րդ հոդվածի իրականացման հետ կապված տեղեկատվության փոխանակման ձևի, ծավալի և ժամկետների վերաբերյալ հարցերը, ապրանքների նկարագրման և կոդավորման ներդաշնակ համակարգի 6-րդ խմբագրության ռուսալեզու տարբերակի և ԱՊՀ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի փոփոխությունները, ՀՄԿ՝ ապրանքների նկարագրման և կոդավորման ներդաշնակ համակարգի 6-րդ խմբագրության փոփոխությունների ռուսալեզու տարբերակը, ԱՊՀ

մասնակից պետությունների մաքսային ծառայողների պատրաստմանն ուղղված հիմնական կազմակերպության գործունեությունը և այլ հարցեր:

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 33-րդ նիստի ընթացքում քննարկվել են ապրանքների տարանցման ժամանակ ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների կիրառման վերաբերյալ միասնական մոտեցումները, ԵԱՏՄ մաքսային տարածքից արտոնություններից օգտվող անձանց ապրանքների արտահանման ժամանակ մաքսային հայտարարագրման կարգը, որոշ ապրանքները անձնական օգտագործման ապրանքներին դասելը կամ չդասելը, ԵԱՏՄ տարածք վտանգավոր թափոնների ներմուծումը բացառելուն ուղղված միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը, ԵԱՏՄ տարածքում «tax-free» համակարգի կիրառումը և այլ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի հոբելյանական 70-րդ նիստի կապակցությամբ ՀՀ ՊԵԿ նախագահ Դավիթ Անանյանը պարգևատրվել է «ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային համագործակցության ամրապնդման համար» կրծքանշանով:

Նշված միջոցառումների շրջանակներում տեղի են ունեցել երկկողմ հանդիպումներ Տաջիկստանի և Ուզբեկստանի մաքսային ծառայությունների ղեկավարների հետ, որոնց ընթացքում քննարկվել է մաքսային ոլորտին առնչվող հարցերի լայն շրջանակ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 70-րդ նիստի ընթացքում ստորագրվել են ընդհանուր առմամբ թվով 11 որոշումներ, այդ թվում՝ «Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների փոխգործակցության մասին» համաձայնագրի 3-րդ հոդվածի իրականացման հետ կապված տեղեկատվության ձևի, ծավալի և ժամկետների համաձայնեցման, ՀՄԿ՝ ապրանքների նկարագրության և ծածկագրման ներդաշնակ համակարգի 6-րդ խմբագրության և ԱՊՀ արտաքին

տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին և այլն:

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 33-րդ նիստի ընթացքում ստորագրվել են ընդհանուր առմամբ թվով 25 որոշումներ, որոնք վերաբերում են մաքսային գործի տարբեր բնագավառներին, այդ թվում՝ ԵԱՏՄ տարածք վտանգավոր թափոնների ներմուծման չթույլատրմանը, ԵԱՏՄ մաքսային տարածքով ապրանքների տարանցիկ փոխադրման միասնական համակարգին, ԵԱՏՄ տարածքում tax-free համակարգի կիրառմանը, ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան որոշակի ապրանքների դասակարգմանը և այլն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 34-րդ նիստը կայանալու է 2020 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Բելառուսի Հանրապետությունում:

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի հաջորդ 71-րդ նիստը և Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 35-րդ նիստը կայանալու են Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մայիս-հունիս ամիսներին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

26.11.2019թ.